



# ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԷ · 1867 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՀՈԿՏԵՄԲԵՐ

## ԳԱՂՂԻԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ

Ի գրոցն Գուգենի Յաղագս Ճշմարտին, Գեղեցկին և Բարոյն.

Աշխարհիս վրայ դպրոց մը կայ որ տտենօք երևելի եղած է, բայց այսօրուան օրս շատ մեծ բանի տեղ չգրուիր. այն է ժէ դարուն գաղղիական դպրոցը, զոր մենք կ'ուզենք դարձնել 'ի պատիւ, հրաւիրելով հասարակաց մտադրութիւնը զինքը փառաւորող յատկութեց վրայ: Մեր անդադար ջանքը ան եղաւ որ ազգերնուս մէջ յարգի ընծայենք Տէգարդի փիլիսոփայութիւնն, որ յանիրաւի զոհուած է լոքի փիլիսոփայութեան, որովհետեւ ըստ մեզ ունի զգացմունքը մտաց հպատակեցնելու, զմարդս բարձրացնելու և մեծցնելու անհամեմատ արժէքը:

Նմանապէս կը սրանչանանք մեր ժէ դարուն ազգային արուեստին վրայ, ս.

րովհետեւ գիտնալով հանդերձ իրեն թերութիւնքը, կը տեսնանք յայնմ մեր քան զամենայն ինչ աւելի նախամեծար համարած բանը, այսինքն մեծութիւն խառն ընդ ուղիղ մտաց և ընդ բանի, պարզութիւն և ոյժ, բաղադրութեան մանաւանդ թէ բացատրութեան հանճար: Գաղղիա անփոյթ իր փառքին՝ և ոչ իսկ անգամ կը տարակուսի որ իր պատմութեանց մէջ մարդկութեան թերևս ամենէն մեծ դարը նշանակուած է, այն դարը յորում ամէն տեսակ արտաքոյ կարգի մարդիկ ելած են: Խնդրեմքրք տեսնուած է որ Հենրիկոս Գի, Ռիշլիէյի, Մազարէնի, Գոլպէրի և Լուդովիկոս ԺԳի նման քաղաքագէտք իրարու ձեռք ձեռքի տան. ան չեմ ուզեր

ըսել թէ ասոնցմէ ամէն մէկը ունեցած չըլլայ նախանձորդներ, նաև վերագոյններ ալ: Ալեքսանդր, Կեսար, Մեծն Կարողոս թերևս կը զերազանցեն զիրենք. բայց Ալեքսանդր մի միայն ժամանակակից մ'ունի որ իրեն կարենայ համեմատուիլ, իր փիլիպպոս հայրը. Կեսար և ոչ մտքէն կ'անցընէր որ օր մը Հոկտաւիոս իրեն արժանաւոր ըլլայ. Մեծն Կարողոս վիթխարի արձան մ'է անապատի մը մէջ. մինչդեռ առ մեզ այս հինգ մեծամեծ մարզիկը անընդհատ կը յաջորդեն իրարու, խուռն մէկմէկու ետեւէ կը հասնին, և թէ օրէն է ըսել մէկ հոգի մը միայն ունին: Եւ ինչպիսի զօրագլուխներ ունեցած չեն 'ի ձեռանէ. միթէ Գոնտէ ստորին է քան զԱլեքսանդր, քան զԱննիբալ և զԿեսար, որովհետև իրեն նախորդներուն մէջ ուրիշ հակառակորդ մը չկրնար փնտրուիլ. ո՞վ ասոնցմէ կը գլէ քան զինքը ընդարձակ և ճիշդ մտածութեամբ, սրադէտ ակնարկութեամբ, արագաչարժ հրահանգօք, խառն յանդգնութեամբ և պնդութեամբ, կրկնակի փառաւորեալ իբրև քաղաքաու և պատերազմայաղթ: Աւելցուր նաև որ իրեն ոխերիմներն եղած են Մէրսիի և Գուլիէլմի պէս կտրիճներ, և իրեն իշխանութէր տակ ունեցած է զԳիւրէն և զԱլեքսանդուր, առանց յիշելու այնչափ ուրիշ գոռ մարտիկներ որ կրթուած են այն հրաշալի մարզարանին մէջ և ձախորդութեանց ժամանակ բաւական եղած են զԳաղղիա ազատելու:

Ուրիշ որ աստե՛ն, գոնէ ներկայիս վըրայ խօսելով, ծաղկած են միանգամայն այնչափ առաջին կարգի բանաստեղծք: Իրաւ է որ չունինք ոչ Հոմերոս մը, ոչ Տանդէ և ոչ Դասոսոյ և Միլտոն. զիւցաղներգութիւնն իր նախնափայլ պարզութեամբը մեզի տրուած չէ: Բայց թատերականին մէջ հազիւ թէ մեզի հաւասարներ ունինք, պատճառաւ որ մեզի պատշաճ բանաստեղծութիւնը թատրոնինն է, որ է ամենէն աւելի բարոյական քերթութիւնը որ 'ի հանդիսի կ'անցընէ զմարդս իր մէկմէկու դէմ

զինուած այլ և այլ կիրքերովը, առաքինութեան և եղերան բուռն կոխները, բախտին խաղերը, վերին տեսութեան տուած դասերը. և այս ամէն բանս անձուկ շրջանակի մը մէջ յորում դիպուածները վրայէ վրայ կը հասնին առանց խառնակութեան, և ուր գործողութիւնը կը դիմէ արագաքայլ դէպ 'ի այն կէտը որ պիտի երևցնէ անձանց սրտերուն մէջ եղած ամենէն աւելի ներքին և սերտ բանը:

Համարձակ ըսենք ինչ որ կը մտածենք. ըստ մեզ Եսքիլէս, Սոփոկլէս և Եւրիպիդէս մէկտեղ առած՝ չեն հաւասարիր միայն Գոռնէյի. վասն զի իրեն պէս ոչ դր ճանչցած և բացատրած է աշխարհիս վրայ եղած ամենէն աւելի ստուգապէս սրտաճմլիկ բանը, այսինքն մեծ հոգի մը որ ինքն իրեն հետ կը մրցի՝ ընդ մէջ ազնուական կրքի մը և պարտուց: Գոռնէյ ստեղծիչ է նոր գործվաչարժ զգացման մը, որ անձանօթ էր նախնեաց և ամէն արդիներու իրմէ առաջ. կ'արհամարհէ բնական և գձուձ կրից հետ խօսիլը. չնայիր որ զրգուէ 'ի սոսկումն և 'ի զթութիւն, ինչպէս կը պահանջէ Արիստոտէլ որ ուրիշ բան չընեն եթէ ոչ Յունաց սովորութիւնքը դարձնել յառաժս: Կ'երևի թէ Գոռնէյ կարդացած է զՊլատոն և ուզած իրեն պատուէրներուն հետեւիլ. խօսքը կ'ուզդէ մարդկային բնութեան այլապէս բարձր մասի մը՝ որ ամենէն աւելի ազնուական կիրքն է և առաքինութեան ամենէն աւելի մօտիկ, ըսել կ'ուզեմ հիացմունքը, և տանելով զհիացմունքը իրեն բարձրագոյն ծաղը՝ ամենէն աւելի հզօր արգասիքն առաջ կը բերէ: Կ'ընդունինք որ Շէքսպիր 'ի վեր է քան զԳոռնէյ թատերական հանճարոյն ընդարձակութեամբն և ճոխութեամբը. բովանդակ մարդկեղէն բնութիւնը կարծես թէ իրեն ձեռքը տրուած է, և կը ներկայացնէ կենաց ամենէն աւելի զանազան տեսարանները իրենց գեղեցկութեան և զազրութեանը մէջ, իրենց մեծութեան և նուաստութեանը մէջ. անզուգական է 'ի նկարու ահաւոր կամ

չնորհալի կրից . Օթէլլոյ, ԼէտիՄագպէթ, նախանձն է, փառասիրութիւնն է, ինչպէս Յուլիանէ և Տէստէմնա մատաղ և թշուառ սիրոյ անմահական անուանքն են : Բայց Գոռնէյի երևակայութիւնը նուազ է, հոգին շատ է . քիչ է իրեն զանազանութիւնը, բայց աւելի խոր . թէ որչհաներ 'ի տեսիլ այնչափ պէսպէս բարոյքներ, բայց հանածները մարդկութեան ընծայելու կարելի եղածներուն մէջ ամենէն մեծերն են . իր տուած տեսարանները պակաս կը կեղեքեն զսիրտ, բայց աւելի փափուկ և վրսեմ են : Ո՛ր կը մնայ Համլէդի մաղձոտութիւնը, Լէտար թագաւորին ցաւը և նոյն իսկ կեսարու արհամարհոտ յանդրգնութիւնը, Օգոստոսի վեհանձնուէր քով որ կը ջանայ տէր ըլլալ անձին ինչպէս եղաւ տիեզերաց, ֆիմէնի քով որ զսէր կը զոհէ պատուոյն, մանաւանդ այն Պաւլինէի քով, որ յանձն չառնուր նոյն իսկ իր սրտին մէջ տկամայ հառաչանք մ'արձակել անոր համար զոր ալ պիտի չսիրէ : Գոռնէյ միշտ բարձրագոյն գաւառները կը պտրտի . հետզհետէ հոովմայեցի է կամ քրիստոնեայ . թարգման է զիւցազանց, երգիչ առաքինութեան, բանաստեղծ պատերազմողաց և քաղաքագիտաց<sup>1</sup> : Եւ պէտք չէ մոռնալ որ Շէքսպիր գրեթէ մինակ է իր ժամանակին մէջ, մինչդեռ Գոռնէյէն ետքը կու գայ Ռասին որ կրնար բաւել ազգի մը քերթողական փառացը :

Ռասին անտարակոյս չկրնար 'ի կշիռ համեմատութե՛ բերուիլ Գոռնէյի հետ թատերական հանճարոյ նկատմամբ . ինքը աւելի գրագէտ մարդ է . չունի ողբերգութեան ոգին, չսիրեր և ոչ կը ճանչնայ քաղաքագիտութեան և պատերազմին ինչ ըլլալը . երբոր Գոռնէյի կը հետևի, ինչպէս օրինակ իմն Ալեքսանդրի և Միհրդատայ մէջ, շատ գէշ կը նմանցընէ : Միհրդատայ այն հուշակաւոր տեսարանն յորում սա կը յայտնէ որդւոցը իր պատերազմին խորհուրդը,

<sup>1</sup> Ծանօթ է մեծին Գոնտէի խօսքը . « Ո՛ր սորված է Գոռնէյ քաղաքագիտութիւնը և պատերազմը » :

ամենագեղեցիկ ճարտասանութեան հատուած մ'է որ չկրնար բաղդատուիլ Կիննայի, Սերտորիոսի քաղաքական և զինուորական տեսարանաց հետ, մանաւանդ Պոմպէի մահուան այն առաջին տեսարանին հետ ուր կը տեսնաս անանկ ճշմարիտ, անանկ մեծ, անանկ խորախորհուրդ ատեան մը ինչպէս կը վայլէր ըլլալ Ռիչլիէոյի կամ Մագարէնի խորհուրդներէն մէկը : Ռասին դիւցազունք նկարելու համար ծնած չէր, բայց հրաշալի կերպով կը ստորագրէ զմարդս իր բնական կիրքերովը, և ամենէն աւելի բնական և խանդակաթ կրք քովը, որ է սէրը . անոր համար գերազանցած է մասնաւորապէս կանացի բարուց մէջ : Մարդկանց համար կարօտ է Տակիտոսի կամ սուրբ Գրոց օգնութեանը . իսկ կանանց հետ շատ աղէկ կը յարմարի և իրենց մտածել և խօսիլ կու տայ կատարեալ ճշմարտութեամբ մը որ բարակ արուեստով մը և ևս ազնուացած է : Մի ուզեր իրմէ ոչ Եմիլիա մը, ոչ Կոռնելիա, ոչ Պաւլինէ . բայց լսէ Անդրոմաքէն, Մոնիման, Բերինիկէն, Փեդրան : Հոն ուրիշի հետևելով հանգերձ նախատիպ է և հիները իրմէ շատ ետ կը ձգէ : Ո՛վ սորվեցուցած է իրեն այն աղուական քնքշանքը, այն շնորհալից այլայլութիւնքը, այն մաքրութիւնը նոյն իսկ տկարութեան մէջ, այն մեղամաղձութիւնը, երբեմն երբեմն նաև այն խորութիւնն անանկ հրաշալի լեզուով մը որ կարծես թէ կնոջ մը սրբտին բնական եղանակն է : Կ'ըսուի որ Ռասին Գոռնէյէն աղէկ կը գրէ . միայն ըսելու է որ երկուքն ալ շատ տարբեր կերպով կը գրեն, և ինչպէս կը գրէին այն երկու այլ և այլ ժամանակները որոնց մէջ իրենք ապրեցան : Մէկը երկու գլխաւոր յատկութիւններ ունի զորոնք առած է իր սեփական բնութենէն և իր ժամանակէն, պարզութիւն և մեծութիւն . միւսը պարզամիտ չէ, բայց շատ ախորժակ ունենալովը կը նայի որ միշտ պարզ ըլլայ և կորսուած մեծութեան տեղը կը բռնէ ամենակատար վայելչութեամբ մը : Գոռնէյ կը

խօսի արքունի պաշտօնէից, զօրավարաց, աստուածաբանից, փիլիսոփայից, զօրաւոր կանանց, Ռիչլիէօյի, Ռոհանի, Սէն-Սիրանի, Տէգարդի և Բասդալի, մայրպետ Անժէլիք Առնոյի և մայրպետ Մագդաղինէ տը Սէն-Ժօզէֆի լեզուն, այն լեզուն որով խօսեցաւ նաև Մոլիէռ և զոր պահեց Պոսիւէ մինչև ցյետին շունչը: Ռասին կը խօսի Լուդովիկոս ԺԳի և իր պալատին գոհար տիկնայց լեզուն: Կենթադրեմ որ այսպէս կը խօսէր ցանկալին, հանճարեղն և տարաբաղդ Հենրիկէ. այսպէս կը գրեն Գլէվ իշխանուհւոյն և Տելեմարի հեղինակները. և կամ այս լեզուն նոյն ինքն Ռասինի լեզուն է, այն ապիկար և փափուկ հոգւոյն որ շուտով անցաւ 'ի տարփանաց 'ի Ջերմեռանդութիւն, որ կ'ախորժէր քնարերգական բանաստեղծութիւնը և կը զեղու բովանդակ սիրտը Եսթերի և Գոթոլիայի պարերուն ու հոգևոր երգերու մէջ. այն զիւրագորով հոգւոյն որ եկեղեցական արարողութիւն մը կամ Եսթերի խաղարկութիւն մը տեսնելով 'ի Սէն-Սիր' լալու չափ կը զգացուէր, որ կ'արգահատէր ժողովրդեան աղէտիցը, որ իր զթատէր և ողորմած բարութիւնը համարձակեցաւ որ մը ճշմարտութիւնը Լուդովիկոս ԺԳի բնի և ձախորդութեան առաջին փշելուն մարեցաւ ինկաւ:

Մոլիէռ այնպէս է Արխատոփանի ինչպէս Գոռնէյ Շէքսփիրի: Պլուտոսի, Պիժակներուն, Ամպերուն հեղինակը անտարակոյս ունի երևակայութիւն մը, ծաղրածու աշխոյժ մը, ստեղծիչ զօրութիւն մը 'ի վեր քան զամենայն համեմատութիւն: Մոլիէռ չունի այնպիսի քերթողական մեծամեծ ծնունդներ. բայց թերևս լաւագոյնն ունի, այսինքն բարքեր. իր զոյնները նուազ փայլուն են, բայց ճախարակը աւելի թափանցող մարդկութեան մէջ շատ մը թերութիւններ և ախտեր դրոշմած է որ յաւիտեանս պիտի կոչուին Ագահ, Երևակայեալ հիւանդ, Գիտուն կանայք, Կեղծաւոր, Տօն Ժիւան, առանց յիշելու Մարդատեսացը որ այլակերպ խաղ մըն

է, թէ սրտաշարժ և ծաղրալից, որ խառնիճաղանձին համար գրուած չէ և չկըրնար ուսմկական ըլլալ. որովհետև անանկ ծաղու արժանի բան մը կը բացատրէ որ շատ քիչ կը գտնուի, այն է ճրչմարտութեան և պատուոյ փափաքանաց մէջ չափազանցութիւն:

Բոլոր հին և նոր առակախօսները, նոյն իսկ սրահանճարն, յստակաբան և ողորկն փեղրոս միթէ կը մօտենան մեր Լաֆոնդէնին՝ որ Մոլիէռի ճարտարութեամբ կը կազմէ իր անձինքը և կը հանէ 'ի տեսիլ, զիտէ ատենին Ռատիօսի եղանակն առնուլ և խառնել տալը առածին հետ. ինքը միանգամայն ամենէն աւելի պարզ և ամենէն աւելի բարակ մատենագիրն է, և իր արուեստը նոյն իսկ կատարելութեանը մէջ կը տեսնուի: Չենք խօսիր մանրավէպներուն վրայ, նախ որ կ'եպերենք այս տեսակ գրութիւնքը, և ետքը որ Լաֆոնդէն անոնց մէջ աւելի խտալական քան թէ գաղղիական ոճ կը բանեցնէ, լի բնականութեամբ, չարածրճութեւ և շնորհքով պատմութիւն մը, բայց առանց ունենալու այն խոր, գուշակի և մեղամաղձոտ զուրցուածքներէն մէկը որ ամէն ժամանակի մեծ մատենագրաց կարգը կը դասեն երկու Աղանիներուն և Մերն ու իրեք Երիտասարդներուն հեղինակը:

Չենք վարանիր զՊուալոյ ալ կցելու 'ի շար այս մեծամեծ մարդիկներուն. յիրաւի իրենցմէ վերջը կու գայ, բայց իրենց ընկերութեանէն է. կը հասկընայ զանոնք, կը սիրէ, կը խրախուսէ: Ինքն եղաւ որ 1663ին Գպրոց կանանցէն ետքը և Կեղծաւորէն ու Մարդատեսացէն շատ առաջ, կը հռչակէր զՄոլիէր վարդապետ տաղաչափութեան. ինքն է որ 1667ին փեղրայի չաջողելէն ետքը կը պաշտպանէր Եւրիպիդէսի յաղթողն ընդդէմ Բրատոնի. ինքն է որ ապագայից կարապետ ըլլալով հաննց 'ի լոյս ինչ որ Գոռնէյի թատերախաղուց մէջ նոր և բոլորովին նախատիպ բաներ կային: Ապահովեց ծերունի ոլբերգակին թոշակն իրենը զոհելով Լուդովիկոս ԺԳ

հարցնելով իրեն թէ ո՞ր մատենագիրն էր որ ամենէն աւելի պատիւ կ'ընէր իր թագաւորութեանը, Մովսէսն է, պատասխանեց Պուալոյ . և երբ թագաւորն մեծ՝ մօտ 'ի վախճան՝ կը հալածէր Բոր-Ռուայայը և կ'ուզէր արգելուլ 'ի բանտի զԱւնոյ, զբազէտ մարդ մը զանուեցաւ որ զւերցեց խրոխտ թագաւորին երեսն 'ի վեր . « Վեհափառութիւնդ 'ի զուր կը փնտռէ զՊ. Աւնոյ, շատ երջանիկ է զինքը գտած ըլլալուն համար » : Պուալոյի երեակայութիւնը և հնարողութիւնը քիչ մը պակաս է . բայց մեծ է ճշմարտութեան և արդարութեան ազդոյ զգացմամբը . գեղեցկութեան և վայելչութեան ախորժակը կրից չափ ունի . քերթող է որովհետև հոգի ունի և ողջախոհ միտք . շատ անգամ սիրտն իրեն տուն տուած է ամենէն աւելի խանդաղատական տողերը . . . :

Ահաւասիկ կարծեմ բաւական մեծ բանաստեղծներ են ասոնք, և դեռ ուրիշներ ալ ունինք . կ'ուզեմ այն գոլորկամ վսեմ մտքերուն վրայ խօսիլ որ արձակ բանն ինչուան բանաստեղծութիւն հանած են : Յունաստան միայն իրեն գեղեցկագոյն օրերուն մէջ կ'ընծայէ թերևս այնչափ այլ և այլ զարմանալի արձակաբաններ : Ո՞վ կրնայ զանոնք համբանքի առնուլ . նախ և առաջ Ռապլէ և Մոնդաներ, յետոյ Տէգարդ, Բասգալ և Մալպրանշ, Լա Ռոշֆուզոյ և Լա Պալուէր, Ռէյ և Սէն-Սիմոն, Պուրտալու, Ֆլէշիէ, Ֆէնլըն, Պոսիւէ . աւելցուր նաև այնչափ նշանաւոր կանայք և անոնց պարագլուխ գտիկինն Սէվիլիէնէ, և այս ամէնքը՝ քանի որ դեռ չէին եկած Մոնդէպրիէօ, Վոլդէօ, Ռուսոյ և Պիւֆոն :

Որով նորանշան ներհակութեամբ երկիր մը յորում մտաւորական արուեստներն յայն չափ կատարելութե հասած են կրնար ստորին մնալ միևս արուեստներուն մէջ . միթէ թերի էին գեղեցկին զգացմունքէն այն քաղաքաբարոյ ընկերութիւնը, այն պերճապայծառ արքունիքը, այն ազատորեարը և այն մեծուհիքը որ զակատեալ էին 'ի

ուէր պաճուճանայ և վայելչութեան , այն ընտիր հասարակութիւնը որ սրխրացեալ էր ո՞ր և իցէ փառքի և որուն խանդը պաշտպանեց զՍիա ընդդէմ Ռիչլիէօյի : Ոչ . ժէ դարուն Գաղղիան մի է, և անանկ արուեստաւորներ հանած է զորոնք կրնայ անցընել 'ի համար իրեն քերթողացը, փիլիսոփայից և ճարտարախօսաց : Բայց մեր արուեստաւորներուն վրայ հրաշանալու համար պէտք է զիրենք հասկընալ : Չենք կարծեր որ երեակայութիւնը նուազ շնորհուած ըլլայ Գաղղիոյ քան Եւրոպայի ուրիշ որ և իցէ ազգի, մանաւանդ որ մեր մէջ իրեն թագաւորութիւնն ալ ունեցած է . քմազարդ հաճոյքն է որ կը տիրէ 'ի ժՉ դարու և կը շնչէ վերածնութեան մատենագրութիւնը և արուեստները : Բայց մեծ խռովութիւն մը կը ծագի ժէին սկիզբը . Գաղղիա այն ժամանակ կարծես թէ յերիտասարգութենէ յայրական հասակ կը փոխուի . փոխանակ ինքն իրեն թողու գերեակայութիւնը, այն ատենէն 'ի վեր կը նայինք որ զինքը զսպենք առանց փճացնելու, չափի մէջ պահենք ախորժակին ձեռքով Յոյներուն նման, ինչպէս 'ի զարգանալ տիոց և ընկերութեան կը սորվինք ճնշել կամ ծածկել մեր բնութե մէջ ամենէն աւելի դուրս ցատրող բանը : Նախընթաց դարուն մատենագրութեան ալ խօսքը չըլլար . նոր բանաստեղծութիւն մը, նոր արձակ մը կը սկսին երևան գալ որ ամբողջ դարու մը միջոց բաւական գեղեցիկ պտուղներ կը բերեն : Արուեստն ալ կը շարժի հասարակաց շարժման հետ . առաջ որ վայելուչ և շնորհալի էր, հիմա ծանր կ'ըլլայ . ալ չդիտեր նախատիպ ըլլալու և արտաքոյ կարգի արդեանց . ոչ կը կայծկըտայ և ոչ կը շլացընէ . ամենէն աւելի մտաց և հոգոյ հետ կը խօսի . անկից առաջ կու գան իր յատկութիւնքը և թերութիւնքը . ընդհանրապէս պակաս է փայլը և գոյնը, բայց աւելի է բացատրութիւնը :

Ժամանակէ մը 'ի վեր այս ամէն բանս փոխած ենք . ուշ իմացանք որ բաւա-

կան երևակայութիւն չունէինք, զոր ստանալու ետեւէ ենք յիրաւի 'ի վնաս բանին, աւաղ, և 'ի վնաս հոգւոյ որ մոռցուած է, մերժուած և վտարուած : Հիմա գոյնը և ձևն է որ կը տիրէ 'ի բանաստեղծութեան, 'ի նկարչութեան, յամենայն ինչ . կը սկսինք խենթի պէս հարուիլ սպանիական պատկերհանութեան . հոլանտական և վենետիկեան դպրոցները հետզհետէ կ'ընկղմեն փրօրենախոյ և Հռոմայ մեծ դպրոցը, Ռոսսիին կը հաւասարի Մոճարդի, և քիչ ատենէն կլիւք մեզի պիտի անհամայ :

Երիտասարդ արուեստաւորը, որ արժանապէս զգուած էք Դաւթի չոր և անզգայ կերպէն, ջանացէք նորոգել գաղղիական դեղաօր (palette) . դուք որ կ'ուզէիք արևուն շողն և շողիւնը յափշտակել, մտածեցէք որ տիեզերաց մեծագոյն էակը մարդս է, և թէ մարդու ունեցած ամենէն մեծ բանը իր խելքն է և մանաւանդ իր սիրտը, անոր համար պէտք է որ ձեր տաստակներուն վրայ դնէք և տարածէք այս սիրտը : Ահաւասիկ այս է արուեստին բարձրագոյն նպատակը . հոն հասնելու համար մի աշակերտիք ոչ Հոլանտացւոց, ոչ վենետիկացւոց, ոչ Սպանիացւոց, այլ դարձիք դարձիք մեր ժի. դարուն ազգային մեծ դպրոցին վարդապետներուն :

Պատկառոտ հիացմամբ կը խոնարհեցնենք գլուխնիս փրորենտեան և հռոմէական դպրոցին առջև, որ մտաւոր է միանգամայն և կենդանի . անկէ դուրս՝ կարծենք թէ գաղղիական դպրոցը հաւասար է կամ գերազանց միւսերուն : Ոչ զՄուրիլեոյ, ոչ զՌուպէնս, ոչ զԳորթէճճիոյ և ոչ զնոյն ինքն Գիցիանոյ նախամեծար կը համարինք քան զԼըսիւէօն և զԲուսէն, որովհետև եթէ առաջինները անզուգական ձեռք և երանգ մ'ունին, մեր երկու հայրենակիցքը ուրիշ կերպով մեծ են, մտածութեամբ և բացատրութեամբ :

Ինչպիսի ճակատագիր ունեցած է Եւտոպէոս Լըսիւէօն . կը ծնանի 'ի Բարիզ 1617ին ատենները և ոչ երբէք հոնկից կ'ելլէ . աղքատ և խոնարհ կեանքը եկեղեցիներու և վանորէից մէջ կ'անցընէ ուր կ'աշխատի : Իր տխուր կենաց միակ քաղցրութիւնը, միակ ըստ փոփանքը ամուսինն էր, և զանիկայ կորսնցնելէն ետքը կ'երթայ կ'արթայ կը մեռնի եւ զանիկայ կորսնցնելէն ետքը կ'երթայ կ'արթայ կը մեռնի եւ զանիկայ կորսնցնելէն ետքը կ'երթայ կ'արթայ կը մեռնի :

քը եկեղեցիներու և վանորէից մէջ կ'անցընէ ուր կ'աշխատի : Իր տխուր կենաց միակ քաղցրութիւնը, միակ ըստ փոփանքը ամուսինն էր, և զանիկայ կորսնցնելէն ետքը կ'երթայ կը մեռնի եւ զանիկայ կորսնցնելէն ետքը կ'երթայ կը մեռնի : Ինչ նըմանութիւն, միանգամայն և ինչ տարբերութիւն Ռափայելի ճակատագրին հետ, որնոյնպէս երիտասարդ մեռած է բայց հեշտութեանց մէջ, սպառնալով մէջ և գրեթէ ծիրանազգեաց . մեր Ռափայելը Գոռնարինայի՝ սիրահար և պապի մը մտերիմ եղած չէ, այլ քրիստոնեայ և արուեստին քրիստոնէութիւն է :

Լըսիւէօն բոլորովին գաղղիական հանճար մ'է . հազիւ թէ կ'ազատի Սիմոն Վուէի ձեռքէն՝ հոգւոյն մէջ ունեցած օրինակին վրայ կը կրթէ ինքզինքը . ոչ երբէք տեսած է իտալական երկինքն, այլ միայն հնութեան և Ռափայելի քանի մը նկարներն ու Բուսէնի իրեն խաւրած ուրուագիծները : Այս խեղճ ծանօթութեամբ և բարակ հանճարի մը առաջնորդութեամբը շարունակ զարգանալով՝ տասը տարիէն ելաւ ինչուան իր տաղանդին վերջի ծայրը, և մինչդեռ ինքն իրեն կարողութիւնը իմացած նորանոր և աւելի զարմանալի պատկերներ պիտի նկարէր՝ մահը վրայ կը հասնի : Դիտէ զինքը սկսեալ Ս. Բրունոնէն զոր լմնցուց 1648ին ինչուան Ս. Պողոսը 1649ին և ինչուան Ս. Բենեդիկտոսի տեսիլքը 1651ին և Մուսաները զոր հազիւ աւարտեց մահուրէն առաջ : Լըսիւէօն անդադար կ'եւելցընէ իր էական յատկութեանց վրայ զորոնք առած է իր սեփական հանճարէն և ազգային հանճարէն, և որ են բաղադրութիւն և բացատրութիւն, իր երևակայած կամ նշմարած յատկութիւնքը, քաջուածք մը որ օր ըստ օրէ աւելի կը պայծառանայ, սակայն առանց փրորենտեան դրպ-

1 Գոռնարինա որ խաւերէն կը նշանակէ հռոմէացի Ազգի՝ Ռափայել Սանցիոյ սիրուհւոյն անունն է : Համբաւաւոր նկարիչը ճանչցուցած է մեզի իրեն սիրուհին գեղեցիկ պատկերով մը, որ հիմա կը պահուի Փլորենտիա :

րոցինն ըլլալու, և նոյն իսկ երանգոց խառնուածք:

Լըսիւհօռ բոլոր ուժը բացատրութե վրայ կը թափէ, ամենայն ինչ կը ծառայեցնէ մտաց, ամենայն ինչ զազափար է և զգացմունք: Ամենեին արուեստակութիւն չունի, այլ կատարեալ պարզութիւն մը. անանկ որ երբեմն իր նկարած դէմքերը շատ հասարակ կըրնային երևալ իրենց բնականութեամբը՝ թէ որ ոգեւորուած չըլլային աստուածային շնչով մը: Պէտք չէ մոռնալ որ իր սիրական նիւթերը պայծառ գոյներ չեն ուզեր. նկարած տեսարանները շատ անգամ ցաւազին են կամ խիստ բայց որովհետև քրիստոնէութեան մէջ ցաւոց և համակամութեան քով կեցած են հաւատք և յոյս, անոր համար Լըսիւհօռ ալ գորովաշարժ բաներուն հետ կը խառնէ քաղցրութիւնը և շնորհքը, և այս մարդս կը զարմացնէ և կը ճմլէ զիս միանգամայն:

Լըսիւհօռի պատկերները ընդհանրապէս մեծ խումբեր են որ կը պահանջէին խոր մտածութիւն մը և ամենէն աւելի դիւրաթեք հանճարը՝ նիւթոյ միութիւն պահելու և զանազանութիւն ու վայելչութիւն տարածելու համար: Կարթուսեանց հիմնադրին Ս. Բրունոնի պատմութիւնը ընդարձակ մեղամաղձոտ բանաստեղծութիւն մ'է ուր 'ի հանդիսի կ'անցնին միակեցական վարուց զանազան տեսարանները: Ս. Մարտինոսի և Ս. Բենեդիկտոսի պատմութիւնը ամբողջ ձեռուընիս հասած չէ. բայց ունեցած երկու կտորներնէս որ են Ս. Մարտինոսի Պատարագը և Ս. Բենեդիկտոսի Տեսիլքը, կրնանք համեմատել այս մեծ աշխատութիւնս՝ իտալիա եղած աս տեսակ բաներէն լաւագունիցը հետ; ինչպէս պարզ խօսելով Մուսաները և Սիրոյ Պատմութիւնը մեր աչքին առջև հաւասար կ'երևան Ֆառնէզինայի:

Ս. Բրունոնի պատմութե մէջ պէտք է դիտել մասնաւորապէս Ս. Բրունոնը որ խաչելութեան մ'առջև գետին վրա ունեւած է, սուրբը որ պապին մէկ նամա-

կը կարգոյ, իր մահը և փառաւորութիւնը: Անկէ աւելի կրնայ մէկը ամբողջ ըլլալ ոչնչացեալու յափշտակեալ: Ս. Պօղոսի Եփեսոս քարոզելը կը յիշեցնէ Աթէնքի Դպրոցն<sup>1</sup>, տեսարանին ընդարձակութեամբը, ճարտարապետութեամբը և խմբերուն վարպետ բաժանմանը: Անձանց շատութիւնը և դրուագներուն պէսպիսութիւնը արգելք չեն ըլլար Ս. Պօղոսի ամենէն աւելի դուրս ցաթքելուն. կը քարոզէ և իր բերնէն կախուած են արք և կանայք, ծերք և մանկունք տեսակ տեսակ դիրքերով: Ահաւասիկ ասոնք հռովմէական դպրոցին մեծամեծ գիծերն են, և իր քաշուածքը լի է ազնուութեամբ և ճշմարտութեամբ. սրչափ սիրուն կամ ծանր զլուխներ կան. սրչափ շնորհալի կի՞ բուն շարժուածքներ և միշտ բնական. հոս այս գանգրուկ տղան որ աղուաբար կը զմայլի, հոն սաժնրադիր և ձեռնամած ծերուկը. բոլոր այս աղուոր զլուխները և նոյն իսկ աս զգեստները Ռափայելի արժանի չէն: Բայց պատկերին հրաշալիքը Ս. Պօղոսի դէմքն է, ոլիմբական Արամազդայ երեսն է նոր հոգևով հրազինեալ: Սուրբ Մարտինոսի Պատարագը խաղաղութեան և լուսութեան տպաւորութիւն մը կը ձգէ մարդուս հոգւոյն մէջ. Ս. Բենեդիկտոսի տեսիլը պարզ է և միանգամայն լի մեծութեամբ. անապատ մը, սուրբը ծնկան վրայ եկած կը դիտէ իր քոյրը սրբուհին Աքուլաստիկէ որ երկինք կը վերանայ հրեշտակներով, հետն ալ մէկտեղ երկու ծաղկապսակ օրիորդներ որ ձեռուընին բռնած են արմաւենի՝ նշանակ կուսութեան. Ս. Պետրոս և Ս. Պօղոս կը ցուցնեն Բենեդիկտեայ այն օթեանը ուր քոյրը պիտի վայելէ անմահական խաղաղութիւն. արևու թեթև ճառագայթ մը կը ծակէ ամպը. Ս. Բենեդիկտոս կարծես թէ այս յափշտակիչ տեսարանէն ալ երկրիս վրայ չէ. անկէ աւելի պայծառ գոյն չկրնար ըլլալ և բացատրութիւն աստուածային է: Ինչ-

1 Աթէնքի Դպրոցը Ռափայելի Վատիկանու մէջ նկարած անուանի պատկերներէն մէկն է:

պէս զեղեցիկ և անարատ են այն երկու մատաղ կուսանքը որ թերևս քիչ մ'երկայն են : Ինչպէս քաղցր են այն իրաններուն բոլորտիքը . ինչպէս լուրջ և անոյշ են այն երեսները . սուրբ միայնակեցին անձը մէկալ յարակից հանդամանօք հանդերձ կատարեալ բնականութիւն մ'ունի , որովհետև երկրիս վրայ է , մինչդեռ կերպարանքը ուր կը փայլատակէ իր հոգին՝ բոլորովին մտաւոր է և արգէն յերկինս :

Բայց ըստ մեզ Լըսիւէօնի գլուխ գործոցը Քրիստոսը խաչէն վար առնելը կամ մանաւանդ վար առնելէն ետքը պատեղն է , զոր Յովսէփ Արեմաթացի , Նիկողիմոս և Յոհաննէս Առաքեալ կը դնեն վարչամակին մէջ . ձախ դին Մագդաղենացին արտասուլթոր կը համբուրէ փրկչական ստուերները , աջակողմը իւղաբեր կանայք և Աստուածածին կոյսը . անկարելի է գեղեցկութիւնը պահելով անկէ աւելի գործօլաշարժ ըլլալ . սուրբ կանայք պատկերին առջևովը ամէնն ալ զատ զատ ցաւերու մէջ են . մինչդեռ իրենցմէ մէկը յուսահատութեամբ կը կոծի , սաստիկ բայց ներքին և լռիկ տխրութիւն մը նկարուած է խաչելոյն մօրն երեսին վրայ . հասկըցած է մարդկային ազգի փրկութեան երկնային շնորհքը , և իր ցաւը այսու մտածութեամբ մեղմացած՝ հանդարտ է և համակամ . անկէ զատ ինչ վսեմ գլուխ . ինքը միայն կերպով մը կը բովանդակէ ամբողջ պատկերը և կու տայ իրեն յատկութիւնը , այսինքն խոր և շարունակ յուզմունք մը : Շատ տեսած եմ Յիսուսը խաչէն իջեցնելու պատկերներ . տեսած եմ Ռուպէնսինը Անվերսա , յորում նիւթին սրբութիւնը կարծես թէ բռնադատած է հոլանտացի մեծահամբաւ նկարիչը գոյնին հետ խտունելու ազնուութիւնը և զգացմունքը . այս պատկերներէն մէկն ալ սիրտս այնչափ շարժած չէ որչափ Լըսիւէօնինը . արուեստին ամէն մասունքն ալ բացատրութիւնն աւելցրնելու համար են . քաջուածքը խիստ և ուժով է . նոյն իսկ գոյնը առանց պայծառ ըլլալու կը գե-

րազանցէ Ս . Բրունոնի , Ս . Մարտինոսի Պատարագին , Ս . Պողոսի և Նաև Ս . Բենեդիկտոսի Տեսիլքին գոյները , որպէս թէ Լըսիւէօն ուզած ըլլայ ժողովել հոտեղ իր հոգւոյն բովանդակ զօրութիւն . քը և հանճարոյն բովանդակ ճարտարութիւնը :

Հիմա գիտէ Մուսաները . ուրիշ տեսարաններ , ուրիշ գեղեցկութիւններ , բայց հանճարը նայն է . ահաւասիկ հեթանոսական նկարներ , բայց հոն ալ կայ քրիստոնէութիւնը Լըսիւէօնի պահած պարկեշտութեան մէջ : Ամէնքը միաբերան եպերած են դիցարանական սխալները զորոնք գործած է խեղճ Լըսիւէօնը , և անոր համար ցաւած են որ իտալիա ճամբորդութիւն ըրած և աւելի սորված չըլլայ հնութիւնը : Բայց ո՞վ կրնայ ունենալ Լըսիւէօնէն հնախօսութեան դաս առնելու տարօրինակ գաղափարը . ես կը վնասեմ և կը գրտնամ հոնտեղ նոյն իսկ նկարչութեան հանճարը . այս Տերպսիքորան աղէկ կամ գէշ իր քիչ մը հաստ քնարովը , որպէս թէ Մուսան մասնաւոր ձիրքեր չունենար , իր համեստ կեցուածքովս վայելուչ շնորհաց նշանակը չէ : Այս իրերը Մուսայից խումբին մէջ որոնց ինչ անուն ալ մէկը ուզէ կրնայ տալ , անիկայ որ ծնկուրներուն վրայ երածչտութեան դիրք մ'ունի և կ'երգէ կամ պիտի երգէ , չընաղազեղ արարած մը , սրբուհի կեկիլիա մը չէ որ ինքզինքը ներշնչման խանդին չձգած նախ և առաջ կը մրճնջէ : Այս պատկերներուս մէջ փայլ և երանգ ալ կայ . տեսարանը գեղեցիկ լուսով մը լուսաւորուած է , որպէս թէ Բուսէն առաջնորդած ըլլար իր բարեկամին ձեռքին :

Կր շարունակուի :